Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 14-ի N 2207 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՓՈԽԱՆՑՄԱՄԲ ՋՐԱՀԱՇՎԻՉ (ՋՐԱՉԱՓԻՉ) ՍԱՐՔԵՐԻ ԿՆՔՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մակերևութային ջրերի օգտագործված պաշարների և ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի կնքման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 212-րդ հոդվածի 1-ին մասին, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ ջրաչափիչ սարքերի կնքման լիազոր պետական մարմին է հանդիսանում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ մակերևութային, ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործված և արդյունահանված պաշարների հաշվառման նպատակով:

3. Ջրաչափիչ սարքը պետք է պարտադիր կնքված լինի լիազոր մարմնի կողմից՝ կնքում իրականացնող պաշտոնատար անձին հատկացված կնիքով: Ջրաչափիչ սարքը ենթակա է կնքման ջրաչափիչ սարքի տվյալների ամրագրման համար անհրաժեշտ բնութագրիչները տրամադրելուց և լիազոր մարմնի կողմից ջրաչափիչ սարքի ու հարթակի հետ կապը հաստատելուց հետո:

4. Ջրառի կետում առկա փականը կնքվում է N 2 հավելվածով սահմանված կարգին համապատասխան, ջրաչափիչ սարքի կնքման հետ միաժամանակ:

5. Ջրաչափիչ սարքը պետք է կնքվի կամ ապակնքվի լիազոր մարմնում ջրօգտագործողի գրավոր դիմումի մուտքագրմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ելնելով եղանակային պայմաններից, աշխարհագրական տեղադիրքից կամ այլ առանձնահատկություններից, ինչպես նաև բնական

աղետների դեպքում ջրաչափիչ սարքերի կնքման կամ ապակնքման ժամկետը լիազոր մարմնի կողմից կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 10 աշխատանքային օր:

6. Կնքումն իրականացվում է երկտակ փաթաթվող և պինդ ձգված վիճակում իրար միացող մետաղալարի (կամ համարժեք լարի, ժապավենի) երկու ծայրերի հանգուցատեղում կնիքով դրոշմելու միջոցով՝ այնպես, որ ջրաչափիչ սարքն ապամոնտաժելիս՝ կնիքը խախտվի (պոկվի, վնասվի):

7. Կնքումն իրականացվում է ջրօգտագործողի (կազմակերպության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի) կամ նրա ներկայացուցչի/լիազորված անձի ներկայությամբ:

8. Կնքմանը ներկա լինելուց հրաժարվելու դեպքում կնքումն իրականացվում է առանց ջրօգտագործողի (կազմակերպության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի) կամ նրա ներկայացուցչի/լիազորված անձի ներկայության և կնքման ակտում կատարվում է կնքմանը ներկա լինելուց հրաժարվելու վերաբերյալ նշում: Կնքման ակտի ջրօգտագործողի օրինակը ջրօգտագործողին է ուղարկվում պատվիրված նամակով՝ ակտը կազմելու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

9. Կնքումն ավարտվելու պահին լիազոր մարմնի պաշտոնատար անձը (անձինք) կազմում է կնքման ակտեր՝ երկու օրինակից, որի ձևը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը:

10. Կնքման ակտը կնքումն ավարտելուց անմիջապես հետո ստորագրվում է լիազոր մարմնի պաշտոնատար անձի (անձանց) և ջրօգտագործողի (կազմակերպության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի) կամ նրա ներկայացուցչի/լիազորված անձի կողմից: Կնքման ակտը կազմվում է երկու օրինակից՝ մեկ օրինակը տրվում է ջրօգտագործողին, մյուսը՝ պահվում է լիազոր մարմնում:

11. Ստուգաչափման լաբորատորիայի կողմից ջրաչափիչ սարքը հետագա օգտագործման համար ոչ պիտանի լինելու մասին տեղեկատվության տրված լինելու դեպքում ջրօգտագործողը կնքման համար տեղադրում է սույն կարգով

նախատեսված պահանջներին համապատասխանող ջրաչափիչ սարք, որը կնքվում է լիազոր մարմնի կողմից՝ սույն կարգին համապատասխան:

12. Լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից կնիքի խախտման (պոկվել, վնասվել) հայտնաբերման դեպքում պաշտոնատար անձի կողմից կազմվում է ամփոփագիր: Ամփոփագրի հիման վրա կնիքը պոկվում է, և ջրաչափիչ սարքը կնքվում է սույն կարգին համապատասխան:

13. Կնքված ջրաչափիչ սարքի կնիքը կարող է պոկվել՝

1) լիազոր մարմնի կողմից ջրօգտագործողի մոտ ուսումնասիրության, ջրային ռեսուրսների պահպանության փաստացի վիճակի մոնիթորինգի ընթացքում ջրաչափիչ սարքի կնիքի խախտման (պոկվել, վնասվել) դեպքում՝ լիազոր մարմնի կամ շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնի նախաձեռնությամբ.

2) ջրօգտագործողի կողմից՝ տեխնոլոգիական գործընթացով պայմանավորված վթարների ժամանակ, ինչի մասին ջրօգտագործողն անմիջապես տեղեկացնում է լիազոր մարմնին՝ նշելով վթարի վայրը, պատճառը, վերացման ժամկետը և անհրաժեշտ այլ տեղեկություններ.

3) ջրաչափիչ սարքի աշխատանքի ճշտության վերաբերյալ ջրօգտագործողի մոտ կամ լիազոր մարմնում կասկած առաջանալու դեպքում լիազոր մարմնի նախաձեռնությամբ՝ օրենքով սահմանված կարգով ջրաչափիչ սարքն ստուգաչափման ներկայացնելու նպատակով.

4) լիազոր մարմնի կողմից՝ միջստուգաչափական ժամանակամիջոցում ջրաչափիչ սարքն ստուգաչափման ներկայացնելու նպատակով.

5) լիազոր մարմնի կողմից՝ վերամիացումների կամ վերանորոգումների ժամանակ.

6) ջրօգտագործողի կամքից անկախ՝ առանց որևէ մեկի միջամտության, արտակարգ իրավիճակների (մասնավորապես՝ երկրաշարժ, ջրհեղեղ, սողանքներ, պտտահողմեր և այլն), կնիքի մետաղալարի կոռոզիայի դեպքերում:

14. Սույն կարգի 13-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում կազմվում են ապակնքման ակտեր երկու օրինակից, որի ձևը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը: Ապակնքման ակտերի մեկ օրինակը տրվում է ջրօգտագործողին, մյուս օրինակը պահվում է լիազոր մարմնում:

15. Սույն կարգի 13-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված դեպքում ջրի հաշվառման գործընթացը չընդհատելու նպատակով ջրօգտագոր-ծողը տեղադրում է օրենքով սահմանված կարգով ստուգաչափման դրական արդյունքներ ունեցող չափման միջոց:

16. Եթե ապակնքումից անմիջապես հետո ջրօգտագործողը չի տեղադրում սույն կարգով սահմանված նոր ջրաչափիչ սարք, ապա ապակնքման մասին ակտով ջրաչափիչ սարքը կնքման ներկայացնելու վերջնական ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

17. Մինչև ապակնքման ակտում նշված՝ կնքման ներկայացնելու վերջնաժամկետը փաստացի ջրօգտագործման դեպքում, ջրօգտագործման ծավալները որոշվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ջրերի հաշվառման այլընտրանքային մեթոդով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ